ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 216 – Ա **21 հունիսի 2019 թ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2002-2008 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ « ՍԵՎԱՆ - 2019 » ԽՈՐԱԳՐՈՎ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԼՈՂԱՓՆՅԱ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով՝

կարգադրում եմ՝

1.Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2002-2008 թվականներին ծնված պատանիների շրջանում «Սևան-2019» խորագրով ծանրամարտի լողափնյա բաց առաջնության կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2002-2008 թվականներին ծնված պատանիների շրջանում «Սևան-2019» խորագրով ծանրամարտի լողափնյա բաց առաջնության անցկացման կանոնակարգը՝ համաձայն N2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2002-2008 թվականներին ծնված պատանիների շրջանում «Սևան-2019» խորագրով ծանրամարտի լողափնյա բաց առաջնության անցկացման մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քարտուղարության պետ Վերգինե Ղուկասյանին՝ միջոցառման անցկացման գործընթացն իրականացնելու համար ապահովել սույն որոշման առաքումը մարզի համայնքներ:

3. Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Վարդանյանին՝ մրցումների անցկացման օրերին ապահովել մասնակիցների առաջին բժշկական օգնությունը:

4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանին:

21.06.2019

Գ. Սանոսյան

ՄԱՐԶՊԵՏ՝ Գնել Սանոսյան
SANOSYAN GNEL 1710830069

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ
Ք.Գավառ

Հավելված N 1

ՀՀԳեղարքունիքի մարզպետի

2019 թվականի հունիսի 21 -ի

N 216-Ա կարգադրության

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2002-2008 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ « ՍԵՎԱՆ -- 2019 » ԽՈՐԱԳՐՈՎ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԼՈՂԱՓՆՅԱ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ

Զազյան Կարեն – մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/

Հարությունյան Վանիկ–մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Վարդանյան Լուսինե – մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Զարվադարյան Գեղամ-մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ

Սաֆարյան Համբարձում –մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ

Շահբազյան Հասմիկ – մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

Կարապետյան Սևակ – Մարտունու քաղաքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և սոցիալական հարցերի բաժնի վարիչ /համաձայնությամբ/

Սարգսյան Գևորգ - Մարտունու քաղաքապետարանի Ս. Միերյանի անվան մարզադպրոցի փոխտնօրեն / համաձայնությամբ /

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2019 թվականի հունիսի 21-ի
N 216-Ա կարգադրության

ԿԱԶՄ
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2002-2008 թվականներին ծնված պատանիների շրջանում «Սևան-2019» խորագրով ծանրամարտի լողափնյա բաց առաջնության անցկացման մրցավարական հանձնաժողովի

Մնացականյան Ատոմ- Մարտունու քաղաքապետարանի Ս.Միերյանի անվան մարզադպրոցի մարզիչ /համաձայնությամբ, գլխավոր մրցավար/
Աբրահամյան Գառնիկ-- Սևանի քաղաքապետարանի Ն. Դագարյանի անվան մարզադպրոցի մարզիչ /համաձայնությամբ, քարտուղար /
Հայրապետյան Արման- Հայրավանք համայնքի ծանրամարտի մարզիչ / համաձայնությամբ, մրցավար /
Մուրադյան Ռուբիկ - Վերին Գետաշեն համայնքի ծանրամարտի մարզիչ /համաձայնությամբ, մրցավար/
Սարգսյան Գևորգ - Մարտունու քաղաքապետարանի Ս.Միերյանի անվան մարզադպրոցի փոխտնօրեն /համաձայնությամբ, մրցավար/

20.06.2019

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2019 թվականի հունիսի 21 -ի
N 216 -Ա կարգադրության

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2002-2008 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ « ՍԵՎԱՆ – 2019 » ԽՈՐԱԳՐՈՎ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԼՈՂԱՓՆՅԱ ԲԱՑ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Նպատակն ու խնդիրներն են

Նպատակն է՝

- Նպաստել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի ազգաբնակչության շրջանում ֆիզիկական դաստիարակության խնդիրների իրականացմանը, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, բնակչության առողջության ամրապնդմանը, մարզիկների բարոյաֆիզիկական և հոգևոր հատկանիշների դաստիարակմանը
- մարզաձևի մասսայականացում մարզում
- մարզի հավաքական թիմը համալրելու նպատակով, ի հայտ բերելու լավագույն մարզիկներին
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, մարզական կազմակերպությունների կողմից ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ուղղությամբ իրականացվող համագործակցված աշխատանքներին:

1. Առաջնության անցկացման կարգը

Առաջնությունն անցկացվում է մեկ փուլով, այն անհատական է և անցկացվում է ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի կանոնակարգի համաձայն:

2. Առաջնության մասնակիցների քաշային կարգերը և թիմերի կազմը

Առաջնությանը մարզիկներին թույլատրվում է մասնակցել հետևյալ՝ 25կգ, 30կգ, 34կգ, 38կգ, 42կգ, 46կգ, 49կգ, 55կգ, 61կգ, 67կգ, 73կգ և 73+ քաշային կարգերում:

Թիմերի կազմը՝ 14 մարզիկ, 2 ներկայացուցիչ և 1 բժիշկ:

3.Առաջնության անցկացման վայրը և ժամանակը

Առաջնությունը կանցկացվի 2019 թվականի հունիսի 27-29-ը Մարտունու քաղաքին կից հանրային լողափում: Մարզիկների կշռումը կկայանա հունիսի 28--ին ժամը 10:30-ից մինչև ժամը 11:30-ը:

Մրցումների սկիզբը՝ ժամը 12:00-ին:

4. Առաջնության մասնակիցները

Առաջնությանը թույլատրվում է մասնակցել մարզադպրոցների, մարզական ընկերությունների և համայնքների կողմից հայտավորված 2002-2008 թվականներին ծնված պատանի ծանրամարտիկներին:

5. Առաջնության կազմակերպումը և ղեկավարումը

Առաջնության ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը:

Առաջնությունն անցկացնում և արդյունքներն ամփոփում է մրցավարական հանձնաժողովը:

6.Ֆինանսական ծախսերը

Առաջնության մասնակիցների ճանապարհածախսի, օրապահիկի և կեցության հարցերը հոգում են գործուղող կազմակերպությունները:

7.Պարգևատրումը

Առաջնությունում՝ յուրաքանչյուր քաշային կարգում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրված մարզիկները կպարգևատրվեն Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի շնորհակալագրերով ու հուշանվեր-մեդալներով:

8.Հայտեր

Թիմերը առաջնության մասնակցության հայտերը՝ հաստատված համայնքի ղեկավարի և բժշկի կողմից, ներկայացնում են առաջնության օրը:

Մարզիկները մրցավարական հանձնաժողովին են ներկայացնում անձը հաստատող փաստաթուղթ /բնօրինակ/ կամ տեղեկանք լուսանկարով՝ հաստատված համայնքի ղեկավարի կողմից:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՂԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ